ՆՄՈՅՇ ՄԸ ՀԱՅ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Բնութեան մեծ յեղափոխութեան ժամանակ, մինչ Նոյաչէն Նաւն կ'երերէր կը տատանէր՝ մերթ լեռնակուտակ ալիքներէն և մերթ անսանձ հողմերէն, տիեզերաց ճարտարապետն նետեց զայն լերկ և վայրի բարձրաբերձ ժայռի մը վրայ, որուն ոչ միայն հայրենական աւանդութիւնն՝ այլ և օրէնսդիրն Իսրայելացւոց՝ Արարատ անունը կու տայ։ Այո՛, նոյն սարէն իջաւ ալեւոր մը, մարդկութեան երկրորդ նախահայրն. նոյն սարէն նահապետին հետեւեցան սուրբ և անսուրբ կենդանիք, յորոց մաս մը ախորժեցաւ հոն մնալ, իսկ այլք հեռացան՝ անձկալով օտար երկրի, օտար անտառաց և կլիմայի մէջ բնակիլ։ Եւ այսպէս ահա Արարատ եղաւ խանձարուրքն նոր մարդկութեան և նոր կենդանեաց։ Հնդամատենի հեղինակն լոկ մեր ձեռքը տուած է այսպիսի վկայագիր մը՝ ազգային աւանդութեան կնքով դրոշմուած։ Գուցէ ոք զայս ևս ծրարէ առասպելաց ծրարին մէջ, որուն չունինք ուրիշ պատասխան՝ բայց միայն այս պարզ խօսքերը. Բարեկա՛մ, մօտեցիր բանիբուն և քա՛ջ քննադատի մը գրասեղանին, իրեն կը յանձնենք համոզել քու կամակոր միտքդ և պարզել մեր առաջարկութենէն դուրս եղած խնդիրը, չուզելով շեղիլ մեր նիւթէն և նպատակէն։

Անշուշտ պատուական ընթերցողն պիտի գուշակէ, թէ անկարելի էր՝ պարզ մի քանի հայ աշխարհի տեղագրութիւնները հետազօտելով և պրպտելով՝ հմտանալ մեր երկրի բնիկ ամէն կենդանեաց վրայ. և թերեւս գոհացուցիչ տեղեկութիւններ կարող էինք տալ անոնց վրայ, եթէ ունենայինք առատ և նմանապէս գոհացուցիչ աղբիւրներ, ի բաց առեալ՝ նախ, մեր նախնեաց այն հազուագիւտ և հետաքննին գրական գոհարները. երկրորդ՝ մեր երկու մեծարգոյ Ինճիճեան և Ալիշան հարց աշխարհագրական հմուտ մատեանքը. երրորդ՝ Մակար Բարխուտարեանց եպիսկոպոսի ընտիր տեղագրութիւնքը. և հուսկ ուրեմն՝ օտարազգի ճանապարհորդաց ուղեգրութիւնքը, յորոց մեզի կարեւորները քաղելով՝ հայ հողին և բուսաբերութեան, ջրին և կլիմային արդիւնքը, կազմենք նմոյշ մը հայ կենդանաբանութեան։

Կենդանեաց ծագումը գրող հեղինակն *, երբ իւր մի և նոյն ժանդոտ գրչով համարձակեցաւ բուսոց զգայականութիւնը ևս նկարել, մուսայից խմբին ապաւինեցաւ, իւր գրչին օգնութիւն մուրալով մութ նկուղներու մէջ թափառող պարիկէն. սա լսելով կը սկսի իւր խորհրդաւոր կտնդոցով թրթռացընել քնարը, ուսկից՝ հեղինակն կը գիւթի՝ և յառաջ կը տանի նորա երգը։ Միթէ հայն չունի՞ իւր պարիկները կամ յաւերժահարսերը** երգելու իրենց բնիկ կենդանիները. այո՛, ունի, բայց նոքա յանձն չեն առնուր երգել, և ոչ այլ Գողթան երգիչք, որք երբեմն սիգապանծ դրուատեցին զՎահագն, աւաղեցին Արտաշիսի անցաւոր փառքը և մահը, և ողբացին Սաթինկան քնքոյշ սրտին վէրքերը. նոքա հիմակ ևս ուրիշ ցաւեր ունին երգելու... ապա ուրեմն թո՛ղ մեր Նահապետին անոյշ ձայնը հնչէ իւր Յուշիկներուն միջէն, նկարագրելով մեր երկրին կենդանեաց ճոխութիւնը.

«Թերեւս չկայ երկիր մը որ այնքան բազմաթիւ և բազմազան ջրային թռչուններ ունենայ, ինչպէս Հայոց լճերն և մորերն։ Այս ետքի տեսակ ջրչեղջից մէջ անուանի է Կարնոյ շամբն կամ մօր և ծով (սազլըղ). որոյ թռչնոց հաւկիթներն բաւական էին շրջակայ գեղերու բնակիչները կերակրելու, ըստ վկայութեան մեծի պատմչին մերոյ, որ կարծեմ քեզի չափազանցութիւն մը երեւնայ. բայց ինչ պիտի ըսես տեղւոյն անգղիական հիւպատոսարանին և վաճառական գործատանց զբօսասէր պարոններուն վկայութեանը, որք կը հաւաստեն, թէ տարւոյն կենդանաբեր եղանակին մէջ՝ շամբին բոլորտիքն՝ մինչեւ բաւական հեռու միջոց՝ գրեթէ անընդհատ կը ծածկուին հաւեղինաց երամներով՝ մինչեւ համարձակ ձիագնացութեան արգել ըլլալ։ Այս դաշտիս մէջ (Կարնոյ) համրած են աւելի քան 200 տեսակ թռչնոց, շատն ջրային։ Գրեթէ բովանդակ թռչնական ցեղից չորսին երեքն ճանչցուած են ի Հայս, մանաւանդ բարձրասուրունք, մաչկոտունք, ճնճղկաց ցեղքն, և գիշահաւք» և այլն։

Մեծարգոյ Հ. Ղեւոնդ վ. Ալիշան իւր համառօտ թռչնաբանութեամբ ցոյց կու տայ՝ թէ ո՛րքան բազմաթիւ էին մեր երկրին թռչունք. բայց ոչ այնչափ անոնց բազմութեան վրայ մարդ կը սքանչանայ, որչափ անոնց գեղեցկութեան վրայ։

---

* Տարուին։

** Հմմտ. Հին հաւատք հայոց. (Վ. Հ. Ղ. Ալիշան), էջ 205։